ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՒԼՊԱՆԵՐՆ ՈՒ ՍՈՆԱՊԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԶԱՐԴԱՆԱԽՇԵՐԸ

Ն. Ք. ԱՎԱԳՅԱՆ

Գուլպան և սոնապանը վաղեմի ժամանակներից սկսած հայկական զգեստի կարևոր մասերից են եղել և ազգագրական տարբեր գավառներում զանազան ձևեր ու զարդանախշեր են ունեցել։

Մինչև XX դարի սկզբները գյուղացի հայ աղջիկը ոչ միայն գուլպաներ և սոնապաններ էր գործում իր օժիտի համար, այլև, մեկ-երկու տարի շարունակ ծախու գուլպաներ ու սոնապաններ պատրաստելով, նրանցից ստացված եկամտի հաշվին իր օժիտն էր պատրաստում։

Անցյալում գուլպան և սոնապանը ծառայել են ոչ միայն ոտների մերկությունը ծածկելու և ցրտից պաշտպանելու համար, այլև նպատակ են ունեցել գեղեցկացնել մարդուն և զգեստի մյուս մասերի հետ միասին ներդաշնակ մի ամբողջություն կազմել։

Գեղեցիկ զարդարուն գուլպա և սոնապան գործելու համար միմյանց հետ մրցում էին նույն քաղի կամ միևնույն գյուղի, նույնիսկ քաղաքի տարբեր քաղերի և տարբեր գյուղերի աղջիկները, ցույց տալով իրենց շնորհքն ու ճաշակը։

Այդ բոլորի շնորհիվ ժամանակի ընթացքում մշակվեցին գուլպա և սոնապան գործելու հատուկ նախշաձևեր, զարգարելու հատուկ ոճ, որն իր ուրույն և պատվավոր տեղն ունի հայկական զարդարվեստի մեջ։

Գուլպան Հայաստանի մի շարք գավառներում՝ Ալաշկերտում, Կարինում, Խարբերդում, Մուշում, Սեբաստիայում, անվանել են բար, Զեյթունում, Հաճնում՝ բոր, Սալմաստում, Վանում, Տիգրանակերտում՝ բար։ Կարճ ճտկերով գուլպան Ակնում, Բաղեշում, Մուշում, Զարսանճապում, Քղիում անվանվել է բուճ[1]։

Բացի գուլպայից, արևելքի ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին, հայտնի է եղել նաև սոնապան, որը նույնպես տարբեր գավառներում զանազան անվանումներ է ունեցել՝ զանկապան, պաճիճ, սաղկ, թողլուղ։

Զանկապան բառը պահլավերեն է, նշանակում է սրունք պահող[2]։ Սոնապանը հայերեն է, նույնպես սրունքի պահպանիչ է նշանակում, սակայն սոնապան բառի հնագույն հիշատակությունից երևում է, որ նա պահպանել է ոչ միայն սրունքը, այլև ազդրը։

Աստվածաշնչի առաջին թագավորության գրքում գեթացի Գողիաթի զգեստը նկարագրության մեջ ասված է, որ նա ունեցել է նաև «սոնապանք պղնձիք ի վերայ բարձիցս»[3]։ Հետևապես այստեղ սոնապանը պղնձե զրահ է, որ նաև ազդրն է պաշտպանել։

VIII դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանն էլ է հիշատակում սոնապանը. «Պարսից դեմ մղած պատերազմի ժամանակ Տիրանը «աճապարեալ ի բաց ձգեաց զաջոյ զոտն սոնապանաւքն հանդերձ և նորա (պարսիկ Վարդուհրի) հակեալ յայն կոյս անկաւ»[4]։

Պարզ չէ, թե Վահանի որդի Տիրանի սոնապանները ոտքի որ մասն են պաշտպանել՝ սրունքը, թե՞ ազդրը։ Բայց հասկանալի է, որ սոնապանը, այսինքն սրունքի պահպանակը, սրունքն է պաշտպանելու. թագավորության գրքի թարգմանության մեջ բարձի պաշտպանությունը պետք է բացատրել այն բանով, որ տվյալ դեպքում զրահը պահպանել է և՛ սրունքը, և՛ ազդրը։

Նույն իմաստն ունի զանկապան կամ զանգապան բառը, որ փոխառություն է կամ զենգերենից (զանկոպանա), կամ պահլավերենից (դանկպան)։

Այս բառի հնագույն հիշատակությունը հայերենում գտնում ենք V դարում։ Դանիելի մարգարեության մեջ ասված է՝ «Յայն ժամ արքն այնոքիք կապեցան պատմուճանօք և վարտեօք, ար-

---

1 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1926։

2 Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1945։

3 «Աստվածաշունչ», գիրք առաջին թագավորութեանց, գլ. ԺԷ։

4 Հովհան Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 274։

տախուրակօք և զանկապանօք իւրեանց և ընկեցան ի մէջ հնոցի հրոյն բորբոքելոյ»[5]։

Մխիթար Գոշի Դատաստանագրքի մէջ ևս հիշատակվում է զանգապանը. թագավորական տան պաշտոնյաների իններորդ դասի մասին, որը կազմել են սուրհանդակ հետևակները, Գոշը գրում է. «Եւ զգեստ է նոցա բամբակե գրատք կազմաւ ճամկօք և զանկապանօք, ունին հողաթափս...»[6]։

Սոնապան, զանկապան բառերի գոյությունը գրականության մեջ ցույց է տալիս, որ դրանք հին են։ Սոնապանը որպես սրունքի պահպանիչ Հայաստանում գոյություն է ունեցել միջնադարից շատ ավելի վաղ։ Ուրարտական պատկերաքանդակների մեջ սոնապանի գոյությունն ակներև է։ Գուլպայի գործածության մասին ամենահին վկայությունը մեզ ծանոթ է հնագույն մաշտոցից, քահանաների զգեստավորման արարողությունից, բայց դա չի նշանակում, թե գուլպան հայերի մեջ մուտք է գործել քրիստոնեություն ընդունելուց հետո և ժողովրդի մեջ տարածվել է եկեղեցու միջոցով։ Սխալ է Վ. Հացունին, երբ ենթադրում է, թե գուլպան Հայկական բարձրավանդակում սկսել է գործածվել XI դարից, արաբական ազդեցության շնորհիվ[7]։

Պատմական Հայաստանում կլիմայական պայմաններն այնպիսին են եղել, որ մարդուն գուլպայի գործածությունը անհրաժեշտ էր, մանավանդ, որ բրդյա տաք հագուստը գործածության մեջ էր դեռևս հայ ժողովրդի նախնիների օրոք։

Սովետական Հայաստանում կատարվող հնագիտական պեղումները հսկայական նյութ են տվել հնագույն շրջանում անասնապահության զարգացման մասին։ II հազարամյակում Հայաստանի տերիտորիայում ապրող լեռնաբնակ, անասնապահ ցեղերը ունեցել են զարգացած մշակույթ։ Այդ են վկայում Լճաշենի և Արթիկի պեղումները։ Անասնապահությունը և առանձնապես ոչխարաբուծությունը մեծ զարգացում է ունեցել ուրարտացիների օրոք IX—VI դարերում մ. թ. ա.[8]։ Ս. Կ. Դալը ուսումնասիրել է պեղումներից հայտնաբերված կենդանիների ոսկորները և հանգել այն եզրակացության, որ ուրարտացիք ունեցել են մերինոս ցեղի ոչխար, որից ստացել են լավ տեսակի բուրդ, բրդյա թել[9]։

Կարմիր-բլուրից հայտնաբերված բրոնզե գոտու բեկորի վրա Խալդի աստվածն է պատկերված, նրա ետևում Շիվինի աստվածն է[10], ըստ որում, Շիվինին կրկնված է երկու տեղ՝ նույն դիրքով։ Նրա ձախ ոտքին կա երկայնակի գծանախշերով գուլպա, իսկ Խալդիի ոտքին՝ լայնակի գծերով։

Հետաքրքիր է նաև կավե գավաթը, նույնպես գտնված Կարմիր-բլուրից, որը ներկայացնում է ուրարտական ճոկավոր կոշիկի ձևը. նրա վրա առկա է կոշիկի թելակապը, որ ունի շախմատաձև նախշեր[11]։ Զիգզագ թելկապից հետո ճոկի վրա շարունակվում են լայնակի գծանախշեր։ Կարելի է ենթադրել, թե դա գուլպա է։

Վերջապես այն փաստը, որ Կարմիր-բլուրից հայտնաբերված են բրդյա կտոր գործելու հաստոցի մասեր, թելով փաթաթված փայտյա իլիկ, բրդյա թելի կծիկներ[12], ինչպես նաև բրդյա գործվածքների տեսակներ՝ թավշանման, մազմզոտ երեսով, հիմք է տալիս ենթադրելու, որ գուլպան գործածվել է դեռևս ուրարտացիների ժամանակ, քանի որ գոյություն է ունեցել բրդյա գործվածք ստանալու ավելի կատարելագործված՝ հաստոցով գործելու եղանակ, հետևապես ձեռքով, շղերով գործելը, որ ավելի պարզ է, պետք է նախորդած լինի նշված եղանակին։

Հետագայում Աղթամարի վանքի (X դար) պատկերաքանդակների մեջ գուլպայի գոյությունը հաստատվում է բազմաթիվ փաստերով[13]։

---

5 Մարգարեություն Դանիելի, գլ. գ. 21։

6 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 267։

7 Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 202։

8 Б. Б. Пиотровский, Ванское царство, Москва, 1959, էջ 148։

9 С. К. Даль, Результаты изучения млекопитающих из раскопок урартского города Тейшебаини («Известия» Акад. наук Арм ССР, 1952, № 1, էջ 75)։

10 Б. Б. Пиотровский, Искусство Урарту, Ленинград, 1962, էջ 73։

11 Նույն տեղում, էջ 109, տախտակ XXVIII։

12 Б. Б. Пиотровский, Кармир-блур, вып. I, Ереван, 1950, էջ 34, вып. III, Ереван, 1955, էջ 67։ А. С. Верховская, Текстильные изделия из раскопок Кармир-блура.

13 Sirarpie Der-Nersessian, Achtamar, Cambrichce Massachusetts, 1965, picture 17, 27, 42, 49.

Գուլպաների և սոնապանների գործածությունը հեռավոր անցյալում հաստատում են նաև նրանց նախշաձևերը, որոնք շատ հին պատմություն ունեն։ Նման նախշեր կատարված են նաև պեղումներից հայտնաբերված հնագիտական առարկաների վրա։

Ըստ զարդանախշերի գուլպաները և սոնապանները բաժանվում են չորս խմբի։

Առաջին խմբի մեջ մտնում են այն գուլպաներն ու սոնապանները, որոնք միագույն են, գործված բրդյա, բամբակյա, մետաքսյա թելերով։ Զարդանախշերը կատարված են հյուսվածքի օղակները պակասեցնելու, ավելացնելու, շիտակ ու շրջոնք գործելու միջոցով[14]։

Այս խմբի նախշաձևերը երկրաչափական են[15] (մեծ և փոքր ռոմբաձև, ալիքաձև, ճառագայթաձև, զիգզագ, ուղիղ, սլաքաձև և այլ գծանախշեր), կենդանական[16] (մարդկային պատկերներ, թռչուններ), կենցաղային առարկաների (նափոր, ծաղկաման) պատկերներ։

Այս խմբի գուլպաները գործվել են Վասպուրականի, Կարինի, Սեբաստիայի, Բալուի շրջաններում։

Գուլպայի յուրաքանչյուր նախշաձև իր անունն է ունեցել ժողովրդի մեջ[17]։ Օգորուկ է կոչվել դեպի վար ուղղված սլաքաձև գծերի շարքը, իսկ եթե սլաքի ուղղությունը դեպի վեր է, այն կոչվել է չաթալ նախշ[18]։ Սոնապանների վրա վերոհիշյալ նախշը երբեմն օգտագործվել է հորիզոնական դիրքով[19]։ Նույն ձևով օգորուկ նախշաձևը կա ձեռագրերի մանրանկարների մեջ[20]։

Հայկական գորգագործության մեջ ևս ընդունված է եղել օգորուկ նախշաձևը[21]։

Գծանախշերից առավել չափով օգտագործվել է բեկյալ գիծը, որը կոչվել է արմոկուկ[22]։

Գուլպաների և սոնապանների վրա կատարված այս նախշաձևերը[23] կան նաև Հնոլիթյան շրջանի կավանոթների վրա (մ. թ. ա. III հազարամյակ), որոնք հայտնաբերված են Շենգավիթի պեղումներից, ինչպես նաև գունազարդ կավանոթների վրա՝ հայտնաբերված Կարմիր վանքի, Աղավնատան, Արմավիրի, Գառնիի պեղումներից[24]։

Հետագայում ուրարտական, ապա հին և միջնադարյան շրջաններում էլ նկատվում են այդ նախշաձևերը[25]։

Երկրաչափական նախշերից շրջանաձևը, ռոմբաձևը, քառանկյունաձևը, խաչաձևը, ըստ հայկական զարդարվեստը մանրամասն ուսումնասիրող Ա. Մնացականյանի, արտահայտում են բնության չորս տարրերի՝ հողի, ջրի, օդի, արևի գաղափարը[26]։ Եռանկյունաձև նախշը արտահայտում է կենաց ծառի գաղափարը՝ նայած նրա գործածման դիրքին։ Ներքևի երկու անկյունը ծնող ղույգերն են, իսկ վերևի անկյունը՝ նրանց զավակը[27]։ Նման դեպքում եռանկյունին պտղաբերության խորհրդանշան է։

Երկրորդ խմբի մեջ մտնում են այն գուլպաներն ու սոնապանները, որոնց հյուսվածքի մեջ զարդանախշերը գունավոր թելերով են գործվել։ Երկրաչափականից բացի այս խմբին հատուկ են նաև բուսական նախշեր։ Այս խումբը տարածված է Վասպուրականում, Կարինում, Կիլիկիայում, Հարքում, Սյունիքում, Արցախում, Լոռիում, Գողթնում, Արարկիրում, Մալաթիայում։

---

14 Տե՛ս տախտակ 1, էջ 1, 2, 3, 4։

15 Հայաստանի պատմության թանգարան, Ազգագրական ֆոնդ, №№ 1213, 1216, 1222, 1223, 1256, 1257, 7748/31։

16 Նույն տեղում, № 1258, 1298։

17 Տե՛ս տախտակ 2։

18 Տե՛ս տախտակ 2, նկ. 13 և 14։

19 Հայաստանի պատմության թանգարան, Ազգագրական ֆոնդ, № 1298 և տե՛ս տախտակ 2, նկ. 8։

20 Մատենադարան, ձեռագիր № 7482, 2-ա թերթ

21 Հ. Թումանյանի տուն-թանգարանի ֆոնդ, № 495/թ—513 գորգ։

22 Հայաստանի պատմության թանգարան, Ազգագրական ֆոնդ, № 1213, 1214, 1256, 1258, 3910։

23 Տե՛ս տախտակ 2, նկ. 5, 6, 7, 9, 10, 14, 15։

24 Г. А. Тирацян. О росписной керамике Древней Армении, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 3, табл. 1, 2.

25 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 122, նկ. 89, 90, էջ 187, նկ. 160, էջ 204, նկ. 182, էջ 252, նկ. 232 և Հայաստանի պատմության թանգարանի հնագիտական ֆոնդ, № 2046/97 Դվին 1956 թ., № 1905/125 Դվին 1948 թ.։

26 Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստը, Երևան, 1955, էջ 16։

27 Նույն տեղում, էջ 240։



Տախտակ II

Բացի ճյուղավոր ծաղկանախշերից այս խմբում կան նաև բուսանախշերի ոճավորված մոտիվներ։ Ճյուղավոր ծաղկանախշերով զարդարված են մեծ մասամբ Վասպուրականի, Մալաթիայի գուլպաները[28], Բուսական զարդանախշերը հանդես են եկել արծաթագործության, ճարտարապետության, գորգագործության, ասեղնագործության ու այլ բնագավառներում և լայնորեն տարածվել են նաև գուլպայագործության մեջ։ Դա պատահական չէ։ Երկրագործ ժողովուրդը բուսականությանը մեծ նշանակություն է տվել իբրև բարիքի, իր ապրուստն ապահովողի, և բուսական զարդանախշերը հանդիսացել են այդ վերաբերմունքի արտահայտման ձև։ Բույսերի միջոցով արտահայտված են ծննդի, աճի, պտղաբերության դաղափարները։ Զարդարվեստում բուսական մոտիվների ամենագլխավոր արտահայտությունը կենաց ծառն է։

Բուսական զարդանախշերը շատ տարածված են նաև ուրիշ ժողովուրդների զարդարվեստում[29]։

Երկրորդ խմբին պատկանող գուլպաների և սոնապանների վրա նույնպես կան թռչնանախշեր և սափորանախշեր[30]։ Թռչուն ծնող-զույգերը հնագույն մոտիվներից են և կան զարդարվեստի բոլոր բնագավառներում. այդ զարդաձևի հետ միասին միշտ հանդես է գալիս նաև կենաց ծառը, իսկ կենաց ծառը ծնող զույգի կյանքն է[31]։ Այս խմբի գուլպաներին և սոնապաններին հատուկ են ակլիճան, հոռմրկութ, խնձորիկ, տախտրկուկ, օզորուկ կոչված զարդանախշերը[32]։ Զարդանախշերից Բալու գավառում շատ տարածված են սայրիկը, ճիվճիվը, փսկա նարդիվանը, քարիմնուկը, ճանկիկը, բրդիկը[33]։

Երրորդ խմբի մեջ մտնում են այն գուլպաներն ու սոնապանները, որոնց հյուսվածքի մեջ երկրաչափական, բուսական և այլ զարդանախշերից բացի կան նաև շղթայակար, ցողնակար եղանակներով ասեղնագործվածներ[34]։ Այդպիսի գուլպաներ են հյուսվել հատկապես Վանում, Կարսում, Բալուում, Լոռիում։

Ասեղնագործական զարդանախշեր են կոլկոլը, կամարուկը, արմրկուկը։ Այս խմբի գուլպաները ավելի քիչ են գործածվել. շատ գործածական են առաջին և երկրորդ խմբի գուլպաները։

Ասեղնագործվել են բրդյա, մետաքսյա, բամբակյա թելերով։

Չորրորդ խմբի մեջ մտնում են այն գուլպաներն ու սոնապանները, որոնք զարդարված են թե՛ հյուսվածքի միջոցով, ինչպես առաջին խումբը, թե՛ գունավոր թելերով, ինչպես երկրորդ խումբը և թե՛ ասեղնագործով, ինչպես երրորդ խումբը[35]։

Հյուսելու միջոցով կատարված են ոռմբաձև նախշեր, իսկ գունավոր թելերով՝ թռչնաձև, բուսական, երկրաչափական. ասեղնագործված են ոսկեզօձ թելով, ուղիղ գծանախշերով։ Այս խմբի գուլպաներ հյուսվել են Շապին-Գարահիսարում, Կարինում։

Մագելով հեռավոր անցյալում, զարդանախշերը շարունակել են ժողովրդի մեջ ապրել, փոխանցվել սերնդից սերունդ, բայց վարպետ կատարողների ձեռքերի տակ նրանք հետագայում աստիճանաբար կորցրել են իրենց սկզբնական գաղափարական իմաստը և վերածվել լոկ նախշաձևերի։ Գուլպան և սոնապանը գործել են շղերով (ճաղ) և հելունով։ Շղեր և հելուն պատրաստել են պողպատից, փայտից, ոսկորից։ Մեծ մասամբ գուլպայագործության մեջ օգտագործվել են պողպատյա շղեր։ Շղերը ընտրվել են թելի հաստության համեմատ։ Գուլպան գործելու համար անհրաժեշտ է հինգ շյուղ։ Ջորսի վրա բռնանվում են զույգ-զույգ օղերը, իսկ հինգերորդը հանդիսանում է փոխանցվող-գործողը։ Վերջինս հերթով փոխվում է։ Ազատ փոխանցվող-գործողի վրա հավաքում են օղակների մի մասը, ազատվում է նախորդը և այսպես նույն գործողությունը կրկնվում է շարունակ։

Գործվում է երկու եղանակով, ըստ գործողի սովորության՝

ա) բռնում են շյուղը աջ ձեռքով, գրիչի դիրքով, իսկ թելը անցնում է ցուցամատի վրայով, ապա միջամատի և մատնեմատի տակով դուրս է գալիս ճկույթի վրա։ Օղակներով շյուղը բռնում են ձախ ձեռքով, ձախ բութը շղի վրա, իսկ ցուցամատը անմիջապես գործվելիք օղակի մոտ։ բ) ձախ ձեռքի դիրքը նույնն է, ինչ նախորդ եղանակում, իսկ աջ ձեռքով թաթի մեջ են առնում

---

28 Արշ. Այպոյաջյան, Պատմություն Մալաթիո Հայոց, 1961, Բեյրութ, էջ 1102։

29 Г. С. Маслова, Народный орнамент верхневолжских карел, М., 1951, էջ 82։

30 Հայաստանի պատմության թանգարան, Ազգագրական ֆոնդ, № 1260, 1277, 1283, 1287։

31 Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 240։

32 Տե՛ս տախտակ 2, նկ. 1, 10, 15, 16, 18։

33 Հարությունք հ. Սարգսյան. Բալու իր սովորությունները, կրթական ու իմացական վիճակը և բարքերը, Կահիրե, 1932, էջ 373—556։

34 Տե՛ս տախտակ 1, նկ. 10, 11, 12։

35 Տե՛ս տախտակ 1, նկ. 13։

շուղը, բութ մատով սեղմում ափին, ցուցամատի վրայով թելը շուղի հետ միասին անցնում է ափի մեջ։

Այս եղանակներից առաջինը տարածված է Զանգեզուրում, Գողթնում, Լեռնային Ղարաբաղում, իսկ երկրորդը՝ Վասպուրականում, Շատախում, Մուշում և Արևմտյան Հայաստանի այլ գավառներում։



Տախտակ II. 1. Ակլիճան, 2. ճիվճիվ, 3. սայրիկ, 4. փսկա նարդիվան, 5. ճանկիկ, 6. կոլկոլ, 7. կոունկ, 8. արմրկուկ, 9. բրդիկ, 10. հոմրկութ, 11. խաչկունք, 12. չանկոլ, 13. քարիմնուկ, 14. չաթալ նախշ, 15. խնձորիկ, 16. տախտրկուկ, 17. կամարուկ, 18 օղորուկ։

Գուլպայագործության համար օգտագործվել են բրդյա, բամբակյա, մետաքսյա թելեր։ Թելը մանել են իլիկով կամ ճախարակով, ներկել են բուսական ներկերով[36], իսկ XIX դարի վերջերից սկսվում է նաև քիմիական ներկերի գործածությունը։

Գուլպան բաղկացած է հետևյալ մասերից. 1) եզրաշերտ կամ եզերածք[37], 2) ծունկ, 3) հիտք, պաճուճ, 4) ներբան, 5) թաթ։ Եզրաշերտը գործում են մեկը ուղիղ, մյուսը՝ շրջոնք, կամ երկուսը ուղիղ, երկուսը շրջոնք, կամ էլ երեքը ուղիղ, երեքը շրջոնք։ Եզրաշերտը մեծ դեր ու նշանակություն ունի գուլպայի ուղիղ լինելու համար։ Առանց եզրաշերտի գուլպայի այդ մասը ոլորվում, թեքվում է դեպի վար։

Սոնապանների վրա եզրաշերտը լինում է նաև ներքևի մասում։ Երբեմն եզրաշերտը գուլպաների վրա լինում է կրկնակի. գործում են որոշ երկարությամբ, ծալում այդ գործածը, երկու եզրերը միացնում միմյանց և շարունակում գործել ուղիղ։

Գուլպայի այն մասը, որը ծածկում է ծունկը, սրունքը ընդհուպ մինչև ներբանը, սովորաբար ուղիղ է գործվում։ Ուղիղ գործելը հանդիսանում է գործելու հիմնական եղանակը։ Այդ գեպքում

36 Մանուկ Պ. Ծերոն, Բարճանճ գյուղ, Համայնապատում, Բոստոն։

37 Զանգեզուրում եզրաշերտը կոչվում է «դ·սրսբ»։

Ներսի կողմում ստացվում է այլ գործվածք՝ շրջոնք և այսպիսով դրսի և ներսի երեսները նման չեն լինում միմյանց։ Նոսր հյուսվածք է ստացվում այն դեպքում, երբ թելը թույլ է պահվում մատներով, իսկ ավելի ամուր, խիտ հյուսվածք՝ երբ թելը ձիգ է պահվում։ Գործելը կարելի է սկսել վերևից և կամ էլ թաթի ծայրից։ Նոսր և խիտ հյուսվածք ստացվում է, բացի թելի ձիգ կամ թույլ պահելուց, նաև շղերի ընտրության միջոցով։ Թույլ հյուսվածք ստանալու համար անհրաժեշտ են հաստ շղեր, իսկ խիտ հյուսվածքի համար՝ բարակ։ Ինչպես յուրաքանչյուրն ունի հատուկ ձեռագիր, այնպես էլ գործելում յուրաքանչյուրն ունի հատուկ գործվածք, «ձեռք»։ Հազվագյուտ է պատահում, որ երկու հոգի գործեն միատեսակ։ Եթե անգամ երկու գործողներ նույն թելով, նույն շրջելով, նույն ձևով գործեն, դարձյալ նրանց գործածքի մեջ տարբերություն կլինի։ Շղերի վրա օղակներ կազմելու կամ գցելուն[38] չորս եղանակ է հայտնի.

1. Խաչաձև, որի նույնպես չորս տեսակը կա՝ ա) մեկ օղակով, բ) եռակի թելով, գ) կրկնակի օղակներ եռակի թելով, դ) շղթայանման օղակներով։

2. Հյուսելով, որի դեպքում զարդերիզը բոտացվում է խիտ։

3. Հասարակ օղակներով, որի երկու տեսակը կա՝ ա) մեկ օղակով, բ) կրկնակի օղակով, որը դեպքում նոսր, ցանցկեն գործվածք է ստացվում։

4. Շրջելով։

Ինչպես սկսելու, այնպես էլ ներբաներ գործելու և թաթը ավարտելու տարբեր ձևեր կան, որոնց հարկ չենք համարում անդրադառնալ։

Գործված գուլպային ձև տալու համար այն հագցրել են կաղապարի վրա։

Կաղապարը Լոռիում կոչվում է «զալիր», իսկ գործողությունը «զալիր քաշել», Զանգեզուրում՝ «տամ»[39]։ Կաղապարը մոտ 1—2 սմ հաստությամբ տախտակ է, մեկ ծայրն ավելի երկար և լայն՝ տղամարդկանց գուլպայի համար, իսկ մյուս ծայրը՝ կարճ և համեմատաբար նեղ կանացի գուլպայի համար։ Կաղապարի վրա հագցրած գուլպան «խանձ են տվել» կրակի վրա, ավելորդ, դուրս ցցված մազերը թե ներսից և թե դրսից այրել, որով գուլպային տվել են ավելը լավ, մաքուր, ողորկ տեսք։ Աղջիկները գուլպա գործելը սովորել են շատ վաղ հասակից։ Ախալքալաքում աղջիկը չորս տարեկան դառնալուց հետո մորից սկսում է սովորել գուլպա գործել[40] և կար անել։



Գուլպա կանացի, մետաքսյա, Գողթն, գյուղ Դնշտ, 1885 թ. (ՀՊՊԹ, № 8286)։

Գուլպան հայկական բոլոր գավառներում ունեցել է իր կարևոր դերն ու նշանակությունը։ Դեռևս վաղ շրջանում այն որոշ չափով նպաստել է աղքատ ընտանիքի համար ապրուստի անհրաժեշտ միջոց հայթայթելուն։ Այդ են վկայում Աստվածաշնչի հետևյալ տողերը՝ «Կինն իմ մանէր և գործէր ձեռօք իւրովք եւ տայր տերանցն, եւ նոցա տային զվարձս նորա»։

Գուլպան և սոնապանը, ինչպես ասվեց, միշտ աղջկա օժիտի բաղկացուցիչ մասն են կազմել։ Վասպուրականում օժիտի սնդուկում դասավորված են լինում մի քանի ձեռք հանդերձ, զար-

---

38 Օղակ կազմելու պրոցեսը Գողթն գավառում կոչվում է «վարագցել», այսինքն վրա դցել, շղերի վրա դցել։

39 Ս. Գ. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը ազգագրական տեսակետով, Հայաստանի պատմության թանգարանի արխիվ, գործ 128, էջ 226։

40 Ե. Լալայան, Ազգագրական հանդես, գիրք II, էջ 195։

դեր և նվերներ։ Վերջիններս եղել են գլխավորապես գուլպաներ[41]։ Ընդհանրապես հարսանիքի ծիսակատարության ժամանակ տրվող նվերների մեջ գուլպան հիմնական տեղ է գրավել։

Հայ ժողովրդի մեջ տարբեր գավառներում գուլպայի հետ կապված են եղել նաև հավատալիքներ, նախապաշարմունքներ։ Մալաթիայում ընդունված է եղել ասել «Հյուսված գուլպան ձեռքով քակողի տունը կավերի»[42]։ Հայկական որոշ գավառներում ամոանը գուլպա չեն օգտագործել[43], Խարբերդում, Մալաթիայում գուլպան հագել են ձմոանը, կամ էլ մյուս եղանակներին միայն, ցուրտ օրերը և հյուր գնալիս։

Գուլպաներն ու սոնապանները որպես տարազի բաղկացուցիչ տարրեր, իրենց ձևերով և զարդանախշերով հետաքրքիր և կարևոր աղբյուր են ժողովրդի անցյալի սովորությունների, հավատալիքների, նախապաշարումների, կիրառական արվեստի և այլ հարցերի պարզաբանման համար։

41 Ե. Լալայան, Ազգագրական հանդես, գիրք Ը, էջ 159։

42 Արշակ Ալպոյաճյան, Պատմություն Մալաթիո հայոց, Բեյրութ, 1961, էջ 1131։

43 Վահե Հայկ, Խարբերդ և անոր ոսկե դաշտը, Նյու-Յորք, 1959, էջ 740։